ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության կոտայքի մարզի
Զովք համայնքի գլ. Խճուղի 16
Էլ. փոստ .՝ angin.araqelyan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N 14

29-ը մայիսի 2015թ

# ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջները՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զովք համայնքի ավագանու 29-ը մայիսի 2015թ-ի չորրորդ հերթական նիստի օրակարգը

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի փոխանակության մասին:
2. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
3. Զովք համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին
4. Համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 12-ի թիվ 35-Ն որոշման մեջ վերաբաշխում կատարելու մասին

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ | | | |
| Հ. ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ | | | |
| Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ | | | |
| Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովք համայնքի գյ. Խճուղի 16, angina.araqelyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29-ը մայիսի 2015 թվականի N 15

## ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 71-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության 12.04.2001թվականի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգի 29-րդ, 30-րդ, 32-րդ, 33-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը համայնքի ավագանին որոշում է.

**Քանի որ քաղաքացի Քնարիկ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 07-030-0111-0034/ 0.1 հա տնամերձ հողամասը սեփականատիրոջից անկախ** պատճառներով չի կարող օգտագործել իր նպատակային նշանակությամբ / քանի որ ռելեֆը ամբողջությամբ անհարթ է/:

Ուստի թույլատրել համայնքի ղեկավարին փոխանակել նշված հողամասը համայնքային սեփականություն հանդիսացող համարժեք / ծածկագիր 07-030-0111-0076 /0.1 հա տնամերձ հողամասի հետ:

Կողմ դեմ ձեռնպահ

ԱՇԱՐՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ
ՀԵՆՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՄԱՍԻՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՖՐՈՒՆԶ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջովք համայնք գլ. Խճուղի 16 էլ. փոստ angin. araqelyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը Մայիսի 2015թ N 16

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի և 47-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010թ-ի հունիսի -ի թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է

1.Սխալմամբ անհայտ քաղաքացիների սեփականություն գրանցված / ծածկագիր 07-030-0111-002/ 0,0194 հա բնակավայրի նշանակության, հասարակական կառուցապատման հողամասը համարել համայնքային սեփականություն:

2.Իսկ համայնքային սեփականություն հանդիսացող /ծածկագիր 07-030-0111-0001/ 0,10325 հասարակական կառուցապատման տարածքից առանձնացնել 0,0196 հա-ը:

3.Միավորել համայնքային սեփականություն հանդիսացող 0,0194հա և 0,0196 հա /0,0390/ հասարակական կառուցապատման հողամասերը, համայնքի հանդիսությունների սրահ կառուցելու համար:

Կողմ դեմ ձեռնպահ

Հ. ԳԱԼՍՏՅԱՆ

Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ

Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի*
Ջովք *համայնքի* գյ. Խճուղի 16, angina.araqelyan@mail.ru

### *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*29-ը մայիսի 2015 թվականի N 17*

### ՋՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ, հոդվածով* և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Համայնքի *ավագանին որոշում է.*

*1.Հաստատել Ջովք համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը հետևյալ կազմով*

1/ Հանձնաժողովի նախագահ- Առաքելյան Անգին՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար
2/Հանձնաժողովի քարտուղար- Թադևոսյան Լիաննա գյուղապետարանի առաջատար մասնագետ
3/Հանձնաժողովի անդամ- Գևորգյան Շողիկ՝ Ջովքի Գագիկ Շահինյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն:
4/Հանձնաժողովի անդամ- Ալմասյան Հասմիկ՝ Ջովք համայնքի ընտանեկան բուժքույր
5/Հանձնաժողովի անդամ- Բարսեղյան Ահարոն՝ համայնքի ավագանի

2.ՈՒժը կորցրած ճանաչել Ջովք համայնքի ավագանու 21.01.2013թ-ի թիվ 2 որոշումը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | *Կողմ* | *Դեմ* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|
| ԱՀԱՐՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ | | | |
| ,ԵՆՐԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ՐԱՄԻՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ | | | |
| ՐՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ | | | |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* ՆՈՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Զովք համայնքի գլ խճուղի 16
Էլ փոստ.՝ angin.araqelyan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ N 18-Ն
29-ը մայիսի 2015թ.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 35 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի , ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով .
Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է
Զովք համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 12-ի «Համայնքի 2015թ-ի բյուջեն հաստատելու մասին» N 35-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝
Բյուջեում, որպես եկամուտ ավելացնել վարչական մասում 160000 / մեկ հարյուր վաթսուն / հազար դրամ , տեղական վճար աճուրդի մասնակցությունից,
Ֆոնդային մասում ավելացնել 2358674 / երկու միլիոն երեք հարյուր հիսունութ հազար վեց հարյուր յոթանասունչորս/ դրամ՝ հողի օտարումից:
Ծախսերը վարչական մասում
Բաժին 10, խումբ 7, դաս 1 4729 հոդվածին ավելացնել 160000/ մեկ հարյուր վաթսուն/ հազար ՀՀ դրամ:
Ծախսերը ֆոնդային մասում

Բաժին 4, խումբ 5, դաս 1 5113 հոդվածին ավելացնել 2358674 / երկու միլիոն երեք հարյուր հիսունութ հազար վեց հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ:

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հ. ԳԱԼՍՏՅԱՆ | | | |
| Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆ | | | |
| Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ | | | |
| Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ | | | |
| Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible] ԳԵՎՈՐԳՅԱՆ